

թեան... անմեղադիր լինիլ մաղթեմ. զի վասն
գոլոյ միայնակ, վերպէին յաշաց իմոց... Սարգիս
Վ. Կոստանդնուպօլսեան եւ Արքեպիսկոպոս մեծի
Կեսարեան:»

Էջ 1093. «Արձանագիր յիշատակագրու-
թեան տպել տուողի մատենիս: Շնորհիւ... յանկ
ելեալ աւարտեցաւ տպագրումն սոյս արգասալի
մատենիս... յամի Տեառն 1750 ի յուլիսի ամսոյ:
Վասն զի որպէս յսկզբան յիշատակեցաւ յինէն
յառաջին ճակատի եւ յառաջարանութեան թէ
յորդորմամբ եւ ծախիւք Տեառն Իսահակայ Ար-
քեպիսկոպոսի ի լոյս ածաւ սոյն գործ: Նոյնպէս
եւ ի վերջարանութեանս համառօտիւ յիշատակել
պարտաւորիմ եղբարց մերազնէից՝ զբարեխոհ
տումն արհիպպատիւ եղբօր մերոյ հարազատի,
որոյ սակս ոչ անխայեաց զպիտոյս ծախուց ի տպա-
գրումն սորին, զի հասցէ գիտեցմանն բարւոյ:
Քանզի զբազմաց բաղձալիս այս մատեան, զոր ի
ձեռն մեծի աշխատասիրութեան իմոյ յօժարեցաւ
ի լոյս ածել, կամեցաւ անջնջելի յիշատակ, եւ
կամ իբր վե՛լէ՛ կացուցանել վասն այն բարեհամ
աղբեր Սուրբ Լուսաւորչի վանացն, որ է ի քա-
ղաքն Կարին, որ եւ կոչի Մոլդի՛ն՝ վե՛ն: Աղագաւ
որոյ հարկաւորեաց եւ զիս արձանագրել զոյս յի-
շատակարան... վասն զի որպէս քաջայայտ իսկ է
յոգունց, մանաւանդ զետեղելոցն ի Կարին՝ հնգե-
տասան ամօք չափ կրել սորին զբազմադիմի աշխա-
տանս ի պատճառ շինութեան, եւ նորագութեան
յիշատակելոյ աղբերն, ի գոլն անդ առաջ-
նորդ...:»

Ինչպէս վերն հրատարակած Սարգսի (Բ.)
նամակէն, գրեալ «2 Հոկտ. 1745 ի Վէնէցիա»,
յայտնի է, Օրինակաց եւ նմանութեանց գրքին
տպագրութեան մասին հրատարակութենէն
հինգ տարի յառաջ բանակցութիւնն սկսած էր